Գործադիր տնօրենի հայտարարություն՝ ի աջակցություն կանանց հզորացման սկզբունքներին

Մենք՝ բիզնես առաջնորդներս ամբողջ աշխարհից, աջակցություն ենք հայտնում կանանց և տղամարդկանց միջև հավասարության առաջխաղացմանը, ի նպաստ՝

- տաղանդների մեծագույն պաշարը մեր ջանքերի գործադրմանն ուղղելուն;
- մեր ընկերությունների մրցունակության առավել զարգացմանը;
- մեր կորպորատիվ պատասխանատվության և կայունության պարտավորությունների կատարմանը;
- մեր ընկերություններում մոդելային վարքագծի հաստատմանը, որը կարտացոլի այն հասարակությունը, որը մենք կցանկանայինք ունենալ մեր աշխատակիցների, համաքաղաքացիների և ընտանիքների համար;
- տնտեսական և սոցիալական պայմանների խրախուսմանը, որոնք հնարավորություն են տալիս կանանց և տղամարդկանց, աղջիկներին և տղաներին; և
- կայուն զարգացմանն այն երկրներում, որտեղ մենք գործում ենք:

Այսպիսով, մենք ողջունում ենք Կանանց հզորացման սկզբունքների դրույթները՝ «Հավասարությունը նշանակում է բիզնես» խորագրով, որոնք մշակվել և տարածվել են Միավորված ազգերի կազմակերպության Գենդերային հավասարության և կանանց հզորացման կազմակերպության (ՄԱԿ կանայք) և ՄԱԿ-ի Գլոբալ պայմանագրի կողմից: Սկզբունքները ներկայացնում են յոթ քայլեր, որոնք բիզնեսը և այլ ոլորտները կարող են ձեռնարկել կանանց առաջխաղացման և հզորացման համար:

Կանանց և տղամարդկանց նկատմամբ հավասար վերաբերմունքը ոչ միայն ճիշտ է, այլև շահեկան է բիզնեսի համար: Կանանց լիարժեք մասնակցությունը մեր ձեռնարկություններում և ավելի մեծ համայնքում գործնական իմաստ ունի թե՛ այսօր, և թե՛ ապագայում: Կայունության և կորպորատիվ պատասխանատվության լայն հայեցակարգը, որը ներառում է կանանց հզորացումը որպես հիմնական նպատակ, օգուտ կբերի բոլորիս: Կանանց հզորացման սկզբունքների յոթ քայլերը կօգնեն մեզ կյանքի կոչել այս հնարավորությունները:

Մենք խրախուսում ենք բիզնես առաջնորդներին միանալ մեզ և օգտագործել Սկզբունքները որպես ուղեցույց այն գործողությունների համար, որոնք բոլորս կարող ենք ձեռնարկել աշխատավայրում, շուկայում և համայնքում՝ կանանց հզորացնելու և մեր ընկերություններին և հասարակություններին օգուտ բերելու համար: Մենք կնգտնենք օգտագործել ըստ սեռի բաժանված տվյալները կայունության հաշվետվություններում՝ մեր շահառուներին մեր առաջընթացի մասին տեղեկացնելու համար:

Գործադիր տնօրեն*, Անունը _____

Ընկերության անվանումը _____

Ամսաթիվ՝ _____ Ստորագրություն _____

WOMEN'S EMPOWERMENT PRINCIPLES

United Nations Global Compact

UN WOMEN

Գործադիր տնօրեն*. Կամ համարժեք կոչումով այլ պաշտոն, եթե ստորագրող անձը ընկերությունում որոշումներ կայացնելու ամենաբարձր դերն ունի և ի վերջո պատասխանատու է ղեկավար որոշումներ կայացնելու համար: